ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Տեղ, 0284-96-2-20, tegh101@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈՒԼԻՍԻ 2025ԹՎԱԿԱՆԻ N 140-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿՐԹԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՊԱՍՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 46-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերով, հաշվի առնելով Տեղ համայնքի առաջին տեղակալի առաջարկությունը և Ա. Սարգսյանի անվան Տեղի թիվ 1 և Տեղի թիվ 2 միջնակարգ դպրոցների տնօրենների դիմումները, ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ բնակավայրի հանրակրթական ուսումնական հաստատություններին տրամադրել կրթական-մշակութային նպաստ՝ Տեղ համայնքի օրվան նախապատրաստվելու համար.

1.1. «Ա. Սարգսյանի անվան Տեղի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ՝ 100 000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ,

1.2. «Տեղի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ՝ 100 000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

2. Գումարը հատկացնել համայնքի բյուջեի Մշակութային միջոցառումների իրականացում (բաժին 08-խումբ 02-դաս 04- ծրագիր-51) բաժնի 4727 (կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից) հոդվածից:

3. Աշխատակազմի գլխավոր մասնագետ-հաշվապահին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՂՈՒԼՈՒՆՑ

2025թ. հուլիսի 28
գ.Տեղ